ԱԳԱՐԱԿԻ ՄԻԱՆԱՎ ԲԱԶԻԼԻԿԱՆ

ԱՆՈՒՇ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

Հայաստանի միանավ բազիլիկաները վաղ միջնադարի եկեղեցական ճարտարապետության ամենատարածված, բայց համեմատաբար քիչ ուսումնասիրված հիմնական և պրոբլեմատիկ տիպերից են։ Այդ հուշարձանները, որոնք քրիստոնեություն ընդունելուց հետո առաջին պաշտամունքային կառուցվածքներից են, Հայաստանի տարածքում շատ հարուստ են ներկայացված։ Նման հուշարձաններով հարուստ է մասնավորապես Աշտարակի շրջանը, որը մըտնում էր պատմական Արագածոտն գավառի մեջ։ Աշտարակի շրջանում գտնվող վաղ միջնադարյան միանավ բազիլիկաների թվում կարելի է նշել Փարպիի Ծիրանավորը (V դ.), «Բաղալի ժամ» կոչվող եկեղեցին Ոսկեվազ գյուղում (IV—V դդ.), Հովհաննավանքի միանավ եկեղեցին (IV—V դդ.), Եղվարդ, Ավան և ուրիշ գյուղերի եկեղեցիները։ Սրանք բոլորն էլ ունեն հատակագծերի (որոնք, իհարկե, տարբերվում են մանրամասներում), հորինվածքի, դարաշրջանին բնորոշ ոճական հատկանիշների և շատ այլ ընդհանրություններ։

Այդ տիպի հուշարձաններից է Աշտարակի շրջանի Ագարակ գյուղի ս. Աստվածածին եկեղեցին, որն իր դարաշրջանի նույնատիպ այլ հուշարձաններին հատուկ բազմաթիվ բնորոշ գծերից բացի, ունի հատակագծային և ծավալատարածական լուծման մեծ ինքնատիպություն։ Գյուղի կենտրոնում գտնվող այս հուշարձանը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, բայց երբեք չի եղել հատուկ ուսումնասիրության առարկա, քանի որ նրա մեծ մասը ոչ միայն թաղված է եղել հողի տակ, այլև խճողված՝ շրջակա բազմաթիվ շինությունների մեջ։ Այն, որ հուշարձանը կարիք ունի մանրակրկիտ մաքրման ու պեղումների, ժամանակին նշել է Թ. Թորամանյանը[1]։ Ի դեպ, նա առաջինն է, որ տվել է այս եկեղեցու նկարագրությունը և հրատարակել նրա հատակագիծը, բայց վերը նշված պատճառներով դրանք լրիվ չեն (հետագա պեղումները ի հայտ բերեցին բազմաթիվ շատ կարևոր և որոշիչ մանրամասներ)։

Թ. Թորամանյանի կարծիքով եկեղեցին կառուցվել է XI դ., իսկ գավիթը, արդեն իր ժամանակ համարյա լրիվ քանդված, XIII դ.[2]։ Նա այս եկեղեցին նկարագրել է իբրև կամարածածկ, ուղղանկյուն հատակագծով և կիսաշրջանաձև աբսիդով մի կառույց։ Թ. Թորամանյանի նկարագրած որոշ մանրամասներ հիմա բացակայում են, ինչպես, օրինակ, աբսիդի կամարը։

Ագարակի եկեղեցու հատակագիծը սխեմատիկ ձևով ներկայացրել է նաև Պ. Կունեոն[3]։

---

1 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 226։

2 Նույն տեղում։

3 Paolo Cuneo, Le basiliche paleocristiane Armene. „Corsi di cultura sull'arte ravennate e bizantina", Ravenna, 1973.

Հուշարձանն ունի ուղղանկյուն հատակագիծ, որի մեջ ներգծված է պայտաձև աբսիդ։ Աղոթասրահի չափերն են՝ 8,6×4,6 մ։ Թե ինչպիսին է եղել հուշարձանի ծածկը՝ թաղածածկ՝ առանց թաղակիր կամարների, թե՞ ուղղակի փայտյա, դժվար է ասել, քանի որ չունենք ճշգրիտ տվյալներ այդ մասին։





Նկ. 1. Ագարակի Աստվածածին եկեղեցու հատակագիծը և կտրվածքները։

Արևմտյան կողմից եկեղեցուն կից է 4,4 մ լայնությամբ մի շինություն, որի ճշգրիտ երկարությունը հնարավոր չէ պարզել՝ նրա կիսաքանդ վիճակի պատճառով։ Այնուամենայնիվ, այդ շինության մեջ (կոչենք այն նախասրահ) պահպանվել են երեք որմնասյուն, երկուսը պատի հարթությունից որոշակի դուրս եկող, իսկ երրորդը՝ հազիվ նշմարվողը, ծածկվում է ավելի ուշ ավելացված պատով։ Որմնասյուների լայնությունը տարբեր է՝ 0,78, 0,47 և 0,68 մ։ Ինչպես արդեն նշեցինք, Թ. Թորամանյանի կարծիքով եկեղեցու նախասրահը կառուցվել է XIII դ.։ Մեր կարծիքով այն կառուցվել է եկեղեցու հետ միա-

ժամանակ։ Իսկ Թ. Թորամանյանը, հավանաբար, նախասրահի թվագրման հարցում հիմք է ընդունել շատ ավելի ուշ ավելացված պատը, որը ժամանակին լրիվ ծածկել է հին պատերը և այժմ պահպանվել է կառույցի միայն հյուսիսային կողմում։ Այդ պատի շատ ավելի ուշ ավելացված լինելը, ուրիշ հատկանիշներից բացի, վկայում են քարերի մոտավորապես երկու անգամ փոքր չափերը (այն դեպքում, երբ հին պատի քարերի միջին չափերը 0,9×0,7 մ են, ավելացված պատի քարերինը՝ 0,45—0,5×0,25—0,3 մ են)։

Նկ. 2. Ագարակի Աստվածածին եկեղեցի։ Տեսք հարավից։

Նախասրահում կատարված հետագա վերանորոգումների ապացույց է նաև եկեղեցու արևմտյան պատի մեջ հիմա գոյություն չունեցող թաղի եզրագծով տարված փորվածքի հետքը։ Հարավային պատի վրա էլ, հավանաբար, գոյություն է ունեցել հետագայում ավելացված նրան ծածկող պատ, որը չի պահպանվել։ Բայց այնուամենայնիվ, նրա գոյությունը կասկած չի հարուցում, որովհետև, նախ՝ թաղի հետքը ցույց է տալիս, որ պատը, որի վրա այն հենվել է, շատ ավելի մոտ է եղել նախասրահի առանցքին և, երկրորդ, ավելացված պատի հյուսիսային մասում կա մի որմնասյուն, որին, անկասկած, համապատասխանել է նույնպիսին հարավային պատի վրա։

Այս ամենը վկայում է եկեղեցու և նախասրահի միաժամանակ կառուցված լինելու մասին, բայց այդ վարկածի օգտին ներկայացվող գլխավոր փաստարկն այն է, որ հուշարձանի հարավային պատի վրա գտնվող իրենց չափերով, քարերի մեծությամբ ու շարվածքով բոլորովին միատեսակ որմնահեցերը եկեղեցու և նախասրահի ընդհանուր հարավային պատի երկայնքով միմյանցից միևնույն հեռավորության վրա են գտնվում (3,4 մ), վկայելով

դրանց օրգանական կապը և միաժամանակ կառուցված լինելը։ Նախասրահի պատերը եկեղեցուն օրգանապես են կցվում նաև արևմուտքից, քանի որ այդ պատերի միջև չկա կարանի և ոչ մի հետք։

Նախասրահում ավելի ուշ շրջանում պատի ավելացման ամենահամոզիչ փաստն այն է, որ այդ պատը փակում է նախասրահի հյուսիսային կողմի մուտքը, որը շատ լավ է երևում հյուսիսային ճակատի վրա։ Մուտքը հետաքրքիր է նրանով, որ իր խորության մեջ պատի վրա երկու կողմից ունի

Նկ. 3. Ագարակի Աստվածածին եկեղեցի։ Նախասրահի հյուսիսային պատի մուտքի խորության մեջ գտնվող զարդաքանդակները։

նույնատիպ զարդաքանդակներ՝ շրջանագծի մեջ ներգծված հավասարաթև խաչեր, որոնք շատ բնորոշ են վաղ միջնադարին։ Քասաղի հուշարձանի պատվանդանի նման զարդաքանդակը (որի կոմպոզիցիան ավելի բարդ է, բայց հիմքում ունի նույն շրջանագծի մեջ ներգծված հավասարաթև խաչ), Բ. Առաքելյանը թվագրում է IV—V դդ.[4]։ Ճիշտ նույնպիսի զարդաքանդակներ կարելի է տեսնել V դ. թվագրվող[5] Երերույքի տաճարի իմպոստների և շքամուտքերի բարավորների, կամ Քասաղի եռանավ բազիլիկայի բարավորի վրա (IV—V դդ.)[6]։

Մուտքի քարերի չափերը, տաշվածքը, գույնը և այլ հատկանիշները խոսում են նրա ամբողջ եկեղեցու հետ միաժամանակ կառուցված լինելու մասին, որ մի անգամ ևս հաստատում է մեր այն ենթադրությունը, թե եկեղեցին ու նախասրահը կառուցվել են միասին՝ վաղ միջնադարում։

---

4 Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV—VII դարերում, Երևան, 1949, էջ 43։

5 Adriano Alpago Novello, Ererouk, Milano, 1977, էջ 25։

6 Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 243։

Նախասրահի հատակի մակարդակը 0,53 մ ցածր է եկեղեցու հատակի մակարդակից։ Նախասրահից եկեղեցի են տանում երկու աստիճան։ Նախասրահից եկեղեցի տանող մուտքն ունի 2,03 մ բարձրություն և 1,02 մ լայնություն։ Մուտքի բարավորի մասին Թ. Թորամանյանը գրում է, որ այն միակտոր քարից է և ունի տարբեր չափեր ներսից ու դրսից։ Բարավորի մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն բաղկացած է իրար կցված 0,6 և 0,57 մ հաստությամբ երկու քարերից, որոնց չափերն են՝ 1,84×0,9 մ ներ-



Նկ. 4. Ագարակի Աստվածածին եկեղեցի։ Տեսք դեպի եկեղեցու ներսը նախասրահից։

սից և 2,26×0,93 մ դրսից։ Բարավորը Π-ձև է, այսինքն քարերն ունեն երկու փոքրիկ ելուստներ, որոնք հենվում են պատերի վրա, ստեղծելով մուտքը։ Այդ ձևը խոսում է եկեղեցին մոտավորապես IV—V դդ. կառուցված լինելու մասին, քանի որ այդպիսի բարավորները բնորոշ են հենց այդ շրջանին և նույնատիպ բարավորներ առկա են ուրիշ վաղ միջնադարյան բազիլիկաներում, ինչպես, օրինակ, Եղվարդի եռանավ բազիլիկայում (V դ.)։

Մուտքից 5,28 մ հեռավորության վրա եկեղեցու հատակը բարձրանում է 0,22 մ բարձրություն ունեցող մի աստիճանով, իսկ մուտքից 7,3 մ հեռավորության վրա դտնվում է բեմը, որն ունի 0,84 մ բարձրություն։ Բեմի աջ և ձախ կողմերում դտնվում են 0,73 մ լայնությամբ երեքական աստիճաններ։ Խորանի հյուսիսային կողմում կա մի փոքր խորշ, իսկ հարավային կողմում երևում են համարյա լրիվ քայքայված արձանագրության հետքեր։ Թ. Թորամանյանի կարծիքով այդ արձանագրությունը արված է Զաքարե ամիրսպասալարի որդի Շահնշահի ժամանակ, որն ապրել է XIII դ.։ Վատ պահպանվածության պատճառով արձանագրությունն անընթեռնելի է, ուստի և նրա բնույթը պարզ չէ։ Բայց քանի որ եկեղեցին կառուցված է վաղ միջնադարում, ինքնին պարզ է, որ արձանագրությունը ոչ թե շինարարական է, այլ նվիրատվական, հիշատակային կամ որևէ այլ բնույթի։

Նկ. 5. Ագարակի Աստվածածին եկեղեցի։ Եկեղեցու խորանի տեսքը։

Խորանի արևելյան պատին կա կիսակլոր վերջավորությամբ երկար լուսամուտ, որի բարձրությունն է 2,7 մ, իսկ լայնությունը՝ 0,67 մ: Լուսամուտը շրջապատող քարերն ունեն ավելի փոքր չափեր, քան խորանը կազմող քարերը և, բացի այդ, խախտում են շարվածքի ճշտությունը։ Դա կարող է վկայել լուսամուտի ավելի ուշ շրջանում բացված լինելու մասին, թեև լուսամուտն ինքն էլ, իր բոլոր հատկանիշներով, թույլ է տալիս խոսելու նրա հնագույն ծագման մասին. մեծ չափերից բացի՝ այն ուղիղ է կտրվածքում և չի նեղանում

դեպի դուրս, որը բնորոշ է վաղ միջնադարի համար։ Լուսամուտի վերևում առկա է քարերի մի շարք՝ երիզված փոքր-ինչ դուրս ելող հարթ գոտիով։ Խորանի պատի հյուսիսային ծայրում պահպանվել է մեծ քար, որը հիշեցնում է խորանի կամարը կրող իմպոստը։ Այն մի մեծ հարթ քար է, որի վերևի մասում կա հորիզոնական սալիկ՝ զուգակցված կորագծով, և իր ձևով նույնպես հաստատում է եկեղեցու վաղ միջնադարյան ծագումը։ Ն. Տոկարսկին գտնում էր, որ ալսպիսի իմպոստները հանդիսանում են այս կամ այն հուշարձանի վաղ միջնադարյան պատկանելիությունը բնորոշող հատկանիշներից մեկը[7]։

Եկեղեցու արևելյան և հարավային ճակատների վրա կան հզոր աշտարակաձև որմնահեցեր, ընդ որում, արևելյան ճակատի վրա՝ անհավասար լայնությամբ (2,41 և 1,78 մ)։ Այդ ճակատները հիշեցնում են ամրոցի ճակատներ։ Աշտարակաձև այդ կառուցվածքների դերն այնքան էլ պարզ չէ. գուցե դրանք միայն կոնստրուկտիվ նշանակություն ունեցող որմնահեցեր են, մի բան, որ որոշ կասկած է հարուցում պատերի առանց այդ էլ մեծ լայնության և հզորության պատճառով, կամ գուցե ամրոցային պատերի ամրացումնե՞ր են, որոնցով և ստեղծվել է հենց եկեղեցին։ Արևմտյան և հյուսիսային ճակատները պակաս հստակ են. արևմտյան ճակատում կիսաքանդ նախասրահի պատերը կորչում են հողում, իսկ հյուսիսային ճակատին կից կառուցված են ուրիշ պատեր, որոնք, թերևս, ավելի ուշ շրջանի հավելում են։ Եկեղեցու հարավ-արևելյան անկյան ու արևելյան և հարավային ճակատների որմնահեցերի լայնությունների տարբերությունը թույլ է տալիս ենթադրելու, որ արևելյան ճակատն ունեցել է նույն լուծումը, ինչ որ հարավայինը, մանավանդ, որ արևելյան պատը շարունակվում է դեպի հյուսիս։ Դա հաստատում է մեր այն ենթադրությունը, որ եկեղեցին գոյացել է ինչ-որ ուրիշ ավելի խոշոր կառուցվածքի պատերից։ Եկեղեցու շուրջը կան մեծ քանակությամբ քարի բեկորներ և ամբողջական քարեր, որոնք, անկասկած, անմիջական կապ ունեն նրա հետ։

Հուշարձանը կառուցված է սրբատաշ կարմրագույն տուֆի մեծ բլոկներից՝ կրաշաղախով։ Շարվածքի ձևը նույնպես խոսում է հուշարձանի վաղ միջնադարյան ծագման մասին. մեծածավալ քարե բլոկների զուգահեռ կարգերը գլխավոր կրող տարրն են, իսկ բուտո-բետոնային լիցքը բավականին բարակ է, ինչպես ընդունված էր Հայաստանում՝ վաղ միջնադարում[8]։ Դա շատ լավ է երևում եկեղեցու արևմտյան պատի քանդված մասի վրա։

Քարերի չափերը, շարվածքը, պատերի լայնությունն ու հզորությունը, որոնք նույնպես շատ բնորոշ են վաղ միջնադարյան բազիլիկաներին, նախասրահի հյուսիսային պատի մուտքի խորության մեջ գտնվող զարդաքանդակները, իմպոստի ու բարավորի ձևերը և այլ հատկանիշներ թույլ են տալիս եզրակացնելու, որ հուշարձանը վերաբերում է IV—V դդ.։ Ընդ որում, հուշարձանի հորինվածքի մեջ շատ բան առ այսօր պարզ չէ, քանի որ հուշարձանը պեղումների խիստ կարիք ունի։ Պարզ չէ, թե արդյոք այս եկեղեցին կառուցված է եղել որպես առանձին շինություն, որը հետո ընդգրկվել է ավելի ուշ կառուցված համալիրի մեջ, թե՞ հենց սկզբից կից է եղել այլ շինությունների և հանդիսացել է, ասենք, ամրոցային եկեղեցի (այդ մասին մտածել են տա-

---

7 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 172։

8 Նույն տեղում։

լիս նախասրահի հյուսիսային պատի մուտքը և դեպի հյուսիս շարունակվող արևելյան պատը, որը քարերի չափերով ու գույնով շատ նման է եկեղեցու պատերին և, ինչպես արդեն վերն ասվեց, մեզ թվում է նույնպիսի լուծում ունեցող, ինչպես և եկեղեցու հարավային պատը)։ Բացի այդ, ինչպես գրում է Թ. Թորամանյանը, ժամանակին Ագարակի սեփականատեր բեկը եկեղեցու շրջակայքը ամբողջովին խճողել է տարբեր շինություններով[9]։ Այնպես որ, հուշարձանի ավելի լրիվ մաքրումն ու պեղումները մեծ դեր կարող են խաղալ նրա մանրամասների հայտնաբերման գործում։

Հետաքրքիր է եկեղեցու այսպես կոչված նախասրահի հարցը։ Թ. Թորամանյանը գրում է, որ չնայած Հայաստանում ընդունված էր եկեղեցուն կից հատուկ շինություն ունենալ չմկրտված և պաշտամունքից զրկված մարդկանց համար, բայց հին հայկական եկեղեցիներում այդ դերը կատարում էին սյունասրահները (կիսաբաց արտաքին սրահները), իսկ V—VII դդ.՝ եկեղեցու անկյուններում գտնվող ուղղանկյուն սենյակները, և միայն X դ. հանգես եկան ծածկած շինությունները՝ գավիթները[10]։ Կարելի է ենթադրել, իհարկե, որ Ագարակի այդ շինությունը ծածկվել է ավելի ուշ, երբ ավելացվել է պատը, մանավանդ, որ գոյություն ունեցող թաղի հետքը նույնպես այդ ժամանակին է վերաբերում։ Բայց այդ դեպքում ինչպե՞ս բացատրել հիմնական պատին կից որմնասյուների առկայությունը, որմնասյուներ, որոնցից մեկը փակված է ավելացված պատի պահպանված մասով։ Գուցե այս կառուցվածքը եղել է ծածկած շինությո՞ւն, որը կատարում էր վաղ քրիստոնեական դարաշրջանի նույնանման կառուցվածքների արտաքին սրահների դերը։

Հետաքրքիր է նաև եկեղեցու լուսամուտների հարցը։ Հուշարձանի վրա այժմ պահպանվել է մի լուսամուտ՝ արևելյան պատի վրա։ Բայց, արդյո՞ք, մյուս պատերի վրա ևս գոյություն են ունեցել լուսամուտներ։ Դատելով հյուսիսային և հարավային պատերի պահպանված բարձրությունից, որոնց վրա չկա լուսամուտների ոչ մի հետք, եթե դրանք նույնիսկ եղել են էլ, ապա պետք է որ տեղադրված լինեին շատ բարձր։ Իհարկե, լուսամուտների գոյությունը ոչ մեծ բարձրության դեպքում հնարավոր էր, բայց պահպանված լուսամուտի բարձրությունը թույլ է տալիս ենթադրել, որ մյուսները ևս պետք է որ մոտավորապես նույն բարձրությունն ունենային։ Այդ պատճառով, մեզ թվում է, որ եկեղեցու հյուսիսային և հարավային ճակատները եղել են խուլ և հուշարձանին շատ ինքնատիպ ծավալա-տարածական լուծում են տվել։

Իհարկե, վերը ասվածը բոլորը չէ, ինչ կարելի է ասել այս հետաքրքիր հուշարձանի մասին։ Հետագա պեղումները, անկասկած, կհանգեցնեն նոր մտքերի ու կռահումների և, հնարավոր է, կփոխեն կամ նույնիսկ կժխտեն մեր որոշ ենթադրությունները։ Այդուհանդերձ կարելի է վստահորեն ասել, որ գոյություն ունեցող բոլոր տվյալները պարզորոշ խոսում են այն մասին, որ Ագարակի եկեղեցին վաղ միջնադարի կառույց է և այդ դարաշրջանի Հայաստանի ամենահետաքրքիր և ուշադրության արժանի բազիլիկաներից մեկն է։

---

9 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 226։

10 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. 1, Երևան, 1942, էջ 155։

АГАРАКСКАЯ ОДНОНЕФНАЯ БАЗИЛИКА

АНУШ ТЕР-МИНАСЯН

Резюме

В центре селения Агарак (Аштаракский р-н) находится один из интересных однонефных памятников армянской архитектуры раннего средневековья. Ряд признаков (характерный для этой эпохи способ кладки камней, форма перемычки входа на западной стене базилики, рельефы в толщине входа на северной стене притвора, представляющие вписанный в окружность равнокрылый крест и другие) дает основание датировать этот памятник IV—V вв.

Своеобразное объемно-пространственное решение памятника (ритмический ряд контрфорсов на южном и восточном фасадах, продолжающаяся на север восточная стена, возможно глухие фасады) показывает, что памятник, видимо, был частью более крупного сооружения.

В сегодняшнем своем состоянии памятник еще не дает ответов на многие вопросы, и его раскопки представляются очень важными.